ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «07» հունվար 2022թ № 14-Ա

## ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ, ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ, ԲՅՈՒՋԵՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման Հավելված 1-ի «Էկոնոմիկայի նախարարություն» բաժնի 5-րդ կետի 5.2 ենթակետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման 11-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերության պետական աջակցության 2022 թվականի ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերության պետական աջակցության 2022 թվականի ծրագրի միջոցառումների ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի:

3) Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերության պետական աջակցության 2022 թվականի ծրագրի բյուջեն՝ համաձայն N 3 հավելվածի:

4) Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերության պետական աջակցության 2022 թվականի ծրագրի շրջանակներում կազմակերպվող միջազգային ցուցահանդեսներին կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի մասնակցության աջակցության ենթակա փոխհատուցվող ծախսերի տրամադրման և ցուցահանդեսներին մասնակցության դիմելու կարգ՝ համաձայն N 4 հավելվածի:

5) Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերության պետական աջակցության 2022 թվականի ծրագրի միջոցառումների իրականացումն (ցուցահանդեսների կազմակերպչական աշխատանքների իրականացում, տաղավարների ընտրություն, տաղավարների դիզայն և այլն) ապահովելու, աշխատանքների ընդունման և ծրագրով նախատեսված միջոցառումների նպատակահարմարության քննարկման նպատակով ստեղծվող հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն N 5 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի տեղակալ Անահիտ Խեչոյանին՝ ապահովել սույն հրամանի տեղադրումը Նախարարության պաշտոնական կայքէջում:

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

**Հավելված N 1**
**Հայաստանի Հանրապետության**
**Էկոնոմիկայի նախարարի**
**2022 թվականի**
**07. 01 __-ի N 14-Ա հրամանի**

# ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ

## Ի. ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Հայաստանի Հանրապետության կայուն տնտեսական զարգացման տեսանկյունից Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարևորում է արտահանմանն ուղղված պետական աջակցությունը՝ համապատասխան գործիքների կիրառմամբ:

2. 2013 թվականից սկսած Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից մեկնարկել է Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման շարունակական ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), որն ուղղված է արդյունաբերական արտադրանքի (ծառայությունների) արտահանելի հատվածի ընդլայնմանը և արտահանման ներուժ ունեցող կազմակերպությունների կարողությունների զարգացմանը:

3. 2021 թվականի ընթացքում ծրագրի իրականացման շրջանակներում մի շարք արդյունաբերական կազմակերպություններ ստացել են պետական աջակցություն միջազգային ցուցահանդեսներին մասնակցության նպատակով, ինչը դրական է ազդել այդ ընկերությունների արտահանման և արտադրության ծավալների աճի վրա: Ծրագրով «հայկական ապրանքների նպատակային շուկաներում առաջմղում, հայկական ապրանքների ներկայացում, շուկայական տեղեկատվության ապահովում»

միջոցառման շրջանակում կազմակերպվել են հետևյալ ցուցահանդեսներին հայկական ընկերությունների մասնակցության ապահովում.

- IPhEB 2021 թվականի ապրիլի 14-ից 16-ը – դեղագործության, բիոտեխնոլոգիաների ցուցահանդես, ՌԴ Սանկտ-Պետերբուրգ,
- Измайлово Shoes 2021 օգոստոսի 16-ից սեպտեմբերի 3-ը - կոշիկի և կաշվե իրերի ցուցահանդես, ՌԴ Մոսկվա,
- CPM 2021 օգոստոսի 31-ից սեպտեմբերի 3-ը – հագուստի ցուցահանդես, ՌԴ Մոսկվա,
- PRODEXPO 2022 – 2022 թվականի փետրվարի 7-ից 11-ը- սննդարդյունաբերության ցուցահանդես, ՌԴ Մոսկվա:

## II. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

4. Ծրագրի մշակման համար հիմք են՝

1) «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը.
2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշման 11-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերություն.
3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման Հավելված 1-ի «Էկոնոմիկայի նախարարություն» բաժնի 5-րդ կետի 5.2 ենթակետ:

## III. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

5. Ծրագրի նպատակներն են՝

1) պետական աջակցության գործիքների կիրառման միջոցով արդյունաբերական արտադրանքի արտահանման ծավալների ավելացման խթանումը.

2) արտահանելի հատվածի ընդլայնումը, արտահանման դիվերսիֆիկացմանը նպաստելը.

3) արտաքին շուկաներում հայկական արտադրանքի ներկայացվածությանը նպաստելը.

4) տնտեսության տեխնիկական և տեխնոլոգիական վերազինմանն աջակցելը.

5) Հայաստանի Հանրապետության մարզերում տնտեսական և ներդրումային ակտիվության բարձրացմանը նպաստելը:

6. Ծրագրի նպատակների ապահովման ուղղությամբ նախատեսվում է՝

1) պետական աջակցության առկա գործիքների կիրառման շարունակականության և արդիականացման ապահովում.

2) արտաքին շուկաներում հայկական ապրանքների առաջմղման գործիքների կիրառում:

## IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

7. Ծրագրի իրականացման սկզբունքներն են՝

1) պետություն-մասնավոր հատված համագործակցության խորացումը.

2) ծրագրի շրջանակներում տրամադրվող պետական աջակցությունը տարածվում է մշակող արդյունաբերության ոլորտների կազմակերպությունների վրա.

3) միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ փոխհամաձայնությունների շրջանակներում համատեղ ծրագրերը կիրականացվեն համաֆինանսավորման սկզբունքով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## V. ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

8. Ծրագրի իրականացման ուղղությամբ նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

**1) գործարար համաժողովների (ֆորումների), շնորհանդեսների, ինչպես նաև այլ համանման միջոցառումների մասնակցություն և (կամ) կազմակերպում.** Նախատեսված միջոցառումները նպատակաուղղված են օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում օտարերկրյա ու հայկական ընկերությունների, պոտենցիալ ներդրողների, սփյուռքահայ գործարարների, պաշտոնական պատվիրակությունների մասնակցությամբ Հայաստանի Հանրապետության տնտեսության, նրա առանձին ոլորտների և կազմակերպությունների զարգացման հնարավորությունների, ներդրումային ծրագրերի ներկայացմանը և քննարկմանը:

Միջոցառման շրջանակներում նախատեսվում է հետևյալ գործողությունները՝

- միջոցառման հայկական կողմի իրականացնողի կողմից համապատասխան կազմակերպչական աշխատանքների իրականացում, այդ թվում արտերկրում և Հայաստանի Հանրապետությունում (տաղավարների, դահլիճների վարձակալություն, հանդիպումների կազմակերպում, ներկայացվող նյութերի պատրաստում և այլն),

- միջոցառման հայկական կողմի իրականացնողի կողմից համաժողովներին, շնորհանդեսներին և համանման այլ միջոցառումներին Հայաստանի տնտեսության, ներդրումային հնարավորությունների և ծրագրերի ներկայացում, կամ Հայաստանի Հանրապետության կողմից այլ մասնակիցների Հայաստանի տնտեսության, ներդրումային հնարավորությունների և ծրագրերի ներկայացման ապահովում,

- անհրաժեշտության դեպքում շահագրգիռ պետական կառավարման մարմինների պաշտոնական ներկայացուցիչների ներգրավում (ծախսերի փոխհատուցմամբ),

- անհրաժեշտության դեպքում, տնտեսվարող սուբյեկտների ներկայացուցիչների ներգրավում, տրամադրելով աջակցություն օտարերկրյա պետությունում կազմակերպվող միջոցառումներին մասնակցության համար կատարված ծախսերի փոխհատուցման ձևով՝ մինչև 50 տոկոսի չափով, վերջիններիս հայտի հիման վրա:

Վերոնշյալ գործողությունները կարող են իրականացվել իրարից անկախ, ելնելով կոնկրետ միջոցառման տրամաբանությունից:

Միջոցառման շրջանակներում ակնկալվում է մասնակցել և (կամ) կազմակերպել առնվազն **5** շնորհանդես և (կամ) համաժողով և (կամ) այլ համանման միջոցառումներ: Միջոցառումները կիրականացվեն՝ նախապես քննարկելով ոլորտի և շահագրգիռ այլ ներկայացուցիչների հետ:

**2) հայկական ապրանքների նպատակային շուկաներում առաջմղում, հայկական ապրանքների ներկայացում, շուկայական տեղեկատվության ապահովում.**

**ա. օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների կազմակերպում և իրականացում** միջոցառման շրջանակներում նախատեսվում է հետևյալ գործողությունները՝

- գովազդային արշավների կազմակերպում, այդ թվում՝ հայկական արտադրանքի վերաբերյալ բուկլետների և կատալոգների հրատարակում,

- արտահանման շուկաների վերաբերյալ տեղեկատվական նյութերի, այդ թվում տվյալների բազաների ձեռքբերում և տրամադրում ընկերություններին,

- հայկական բրենդների ձևավորման աջակցություն,

- օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում հայկական արտադրանքի համտեսների, շնորհանդեսների, մրցույթների ու նորաձևության ցուցադրությունների, ինչպես նաև այլ նմանատիպ միջոցառումների կազմակերպում, կամ մասնակցության և (կամ) կազմակերպմանն աջակցություն:

Անհրաժեշտության դեպքում, միջոցառման շրջանակներում, կարող են ներգրավել շահագրգիռ պետական կառավարման մարմինների պաշտոնական ներկայացուցիչներին: Միջոցառման շրջանակներում նախատեսվում է նաև միջոցառումներին պետական կառույցների ներկայացուցիչների մասնակցության ապահովում դեպքում՝ համապատասխան ծախսերի փոխհատուցում:

Վերոնշյալ գործողությունները կարող են իրականացվել իրարից անկախ, ելնելով կոնկրետ միջոցառման տրամաբանությունից:

Ընդհանուր առմամբ, միջոցառման շրջանակներում ակնկալվում է նպատակային շուկաներում և (կամ) Հայաստանի Հանրապետությունում տեղական արտադրանքի առաջմղման առնվազն **6** միջոցառման կազմակերպում և (կամ) մասնակցություն:

Միջոցառումները կիրականացվեն՝ նախապես քննարկելով ոլորտի և շահագրգիռ այլ ներկայացուցիչների հետ:

**բ. ցուցահանդեսների կազմակերպում և մասնակցության ապահովում** միջոցառման շրջանակներում նախատեսվում է թիրախային շուկաներում և Հայաստանում մշակող արդյունաբերության ոլորտների Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած կազմակերպություններին (իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր) ցուցահանդեսներին մասնակցության աջակցության տրամադրում, ծախսերի համաֆինանսավորման սկզբունքով: Օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում ցուցահանդեսներին մասնակցությունը և (կամ) կազմակերպումը նախատեսվում է հետևյալ ձևաչափով՝ **միասնական հայկական տաղավարով մասնակցություն**.

Միասնական հայկական տաղավարի սկզբունքով մասնակցության դեպքում պետական աջակցությունը տրվում է տվյալ ցուցահանդեսին մասնակցած մշակող արդյունաբերության ոլորտների Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ստացած կազմակերպություններին (իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր) ցուցահանդեսի տարածքի վարձակալության ծախսերի, տաղավարի դիզայնի ծախսերի, տաղավարի կառուցապատման, կահավորում և դրա գործունեության համար անհրաժեշտ

ծախսերի, մասնակիցների գրանցման վճարի ծախսերի մինչև 50 տոկոս համաֆինանսավորմամբ:

Ծրագրի շրջանակներում կարող է իրականացվել նաև կազմակերպչական ծախսերի փոխհատուցում (միջոցառման հայկական կողմի իրականացնողի գործուղման ծախսեր):

Ընդհանուր առմամբ, միջոցառման շրջանակներում ակնկալվում է աջակցել ընկերություններին՝ առնվազն 7 ցուցահանդեսի մասնակցելու նպատակով: Ցուցահանդեսների կազմակերպման և (կամ) մասնակցության իրականացվում են ըստ անհրաժեշտության՝ ոլորտի ներկայացուցիչների հետ համաձայնեցված և (կամ) շուկայի պահանջարկի ուսումնասիրությունների հիման վրա:

9. Սույն ծրագրի 8-րդ կետով նախատեսված միջոցառումների շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 30-Ն որոշմամբ հաստատված ցանկում ներառված սահմանամերձ համայնքներում գործունեություն իրականացնող կազմակերպություններին աջակցությունը տրամադրվում է հետևյալ սկզբունքներով՝ սույն ծրագրի 8-րդ կետի 1-ին ենթակետի, 2-րդ ենթակետի «բ» պարբերության մասով ծախսերի փոխհատուցում և (կամ) համաֆինանսավորում՝ մինչև 75 տոկոսի չափով:

## VI. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

10. **Սույն ծրագրի 8-րդ կետով նախատեսված միջոցառումները կիրա-կանացվեն Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի ֆինանսավորմամբ**՝ 360,000.0 հազ. դրամի չափով, և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին (մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի համաֆինանսավորմամբ):

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
Էկոնոմիկայի նախարարի
2022 թվականի
հունվարի 7-ի N 14-Ա հրամանի

# ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ

| NN ը/կ | Միջոցառումը | Ակնկալվող արդյունքը | Կատարողը | Կատարման ժամկետը | Ֆինանսավորման աղբյուրը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. | Գործարար համաժողովներին (ֆորումների), ինչպես նաև այլ համանման միջոցառումներին մասնակցություն և (կամ) կազմակերպում | 1. Ակնկալվում է մասնակցել և (կամ) կազմակերպել առնվազն 5 շնորհանդես և (կամ) համաժողով և (կամ) արտագնա քարոզարշավ և (կամ) այլ համանման միջոցառումներ | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2022թ. ընթացքում | ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ |
| 2. | Հայկական ապրանքների՝ նպատակային շուկաներում առաջմղում, հայկական ապրանքների ներկայացում, շուկայական տեղեկատվության ապահովում | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | 1) օտարերկրյա պետությունում (կամ) Հայաստանում հայկական արտադրանքի վերա-բերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների կազմակերպում և իրականացում | Միջոցառման շրջանակներում ակնկալվում է առնվազն 6 հատ արտերկրում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների կազմակերպում և իրականացում | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2022թ. ընթացքում | ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ |
| | 2) ցուցահանդեսների կազմակերպում և մասնակցության ապահովում | Միջոցառման շրջանակներում ակնկալվում է կազմակերպել և (կամ) մասնակցել առնվազն 7 ցուցահանդեսի | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 2022թ. ընթացքում | ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված այլ միջոցներ |

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության
Էկոնոմիկայի նախարարի
2022 թվականի
հունվարի 7-ի N 14-Ա հրամանի

## ԲՅՈՒՋԵ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ

| Հ/Հ | ԾԱԽՍԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ | Գումար (հազար դրամ) |
|---|---|---|
| 1 | **Գործարար համաժողովներին (ֆորումների), ինչպես նաև այլ համանման միջոցառումներին մասնակցություն և (կամ) կազմակերպում** | **40,000.0** |
| 2 | Հայկական ապրանքների՝ նպատակային շուկաներում առաջ-մղում, հայկական ապրանքների ներկայացում, շուկայական տեղեկատվության ապահովում | **320,000.0** |
| 2.1 | օտարերկրյա պետությունում հայկական արտադրանքի վերա-բերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների կազմակերպում և իրականացում | 40,000.0 |
| 2.2 | ցուցահանդեսների կազմակերպում և/կամ մասնակցության ապահովում | 280.000.0 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **360,000.0** |

**Հավելված N 4**
**Հայաստանի Հանրապետության**
**Էկոնոմիկայի նախարարի**
**2022 թվականի**
**հունվարի 7-ի N 14-Ա հրամանի**

# ԿԱՐԳ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԾԱԽՍԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՄԵԼՈՒ

### Ի.Ընդհանուր դրույթներ

1. Սույնով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության արտահանման ուղղվածություն ունեցող մշակող արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի արտերկրում կազմակերպվող միջազգային ցուցահանդեսներին մասնակցության աջակցության տրամադրման և ցուցահանդեսներին մասնակցության դիմելու հետ կապված հարաբերությունները:

### II.Աջակցության տրամադրման պայմանները

2. Աջակցությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության արտահանման ուղղվածություն ունեցող մշակող արդյունաբերության ոլորտներում գործունեություն իրականացնող արդյունաբերական կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին (այսուհետ՝ կազմակերպություն):

3. Աջակցությունը տրամադրվում է միասնական «հայկական» տաղավար ձևաչափով կազմակերպվող միջազգային ցուցահանդեսներին մասնակցության համար:

4. Աջակցությունը կարող է տրամադրվել ցուցահանդեսի մասնակցության և կազմակերպչական ծախսերում մինչև 50 տոկոս (սահմանամերձ տարածաշրջաններում գործող կազմակերպությունների դեպքում մինչև 75 տոկոս) համաֆինանսավորման

սկզբունքով: Սույն կարգի իմաստով ցուցահանդեսի մասնակցության կազմակերպչական ծախսեր կարող են համարվել.

1) մասնակիցների գրանցման վճար,

2) տաղավարի դիզայն,

3) ցուցահանդեսի տարածքի վարձակալության (1 մասնակցի հաշվով ոչ ավել, քան 9 քմ տարածքի համար),

4) կառուցապատում, կահավորում և դրա գործունեության համար անհրաժեշտ ծախսեր:

## III. Ցուցահանդեսներին դիմելու և աջակցության տրամադրման ընթացակարգը

5. Սույն հրամանով հաստատված հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) հաստատում է ցուցահանդեսի մասնակցության նախնական հայտը և պայմանները:

6. Ցուցահանդեսի մասնակցության նախնական հայտի, պայմանների և դիմելու վերջնաժամկետի վերաբերյալ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն (այսուհետ՝ Նախարարություն) իրազեկում է իրականացնում Նախարարության կայքէջում տեղադրված հայտարարության միջոցով:

7. Կազմակերպությունները մասնակցության հայտը (համաձայն Ձև 1-ի) ներկայացնում են մինչև հայտարարությամբ նշված վերջնաժամկետը:

8. Հանձնաժողովն ուսումնասիրում է ներկայացված հայտերը, քննարկում է մասնակցության պայմանները և ներկայացված հայտերի հիման վրա հաստատում է ցուցահանդեսի մասնակցությունը:

9. Կազմակերպությունների հետ համաձայնություն ձեռք բերելուց հետո Նախարարությունը պայմանագիր է կնքում մասնակցող կազմակերպությունների կամ կազմակերպությունները միասնական ներկայացնող կառույցի հետ:

10. Ցուցահանդեսի մասնակցության պայմանների վերաբերյալ Նախարարության և կազմակերպության միջև համաձայնության ձեռք չբերելու և պայմանագիր չկնքելու դեպքում՝ գործընթացը դադարեցվում է:

11. Ցուցահանդեսի ավարտից հետո Հանձնաժողովը ներկայացնում է ցուցահանդեսի մասնակցության վերաբերյալ եզրակացություն՝ կատարված աշխատանքների վերաբերյալ, մասնավորապես.

1) Ցուցահանդեսի մասնակիցների քանակի,
2) Ցուցահանդեսին պետության կողմից համաֆինանսավորված ծախսերի,
3) Ցուցահանդեսի արդյունքների վերաբերյալ:

12. Ծրագրում չներառված այլ ցուցահանդեսների մասնակցության դեպքում ընկերությունները Նախարարություն են ներկայացնում՝

1) ցուցահանդեսի մասնակցության առաջարկ՝ նշելով կոնկրետ ցուցահանդեսը, (համաձայն Ձև 2-ի),
2) ցուցահանդեսի մասնակցության համապատասխան պայմանները և նախատեսվող ծախսերի նախահաշիվը (համաձայն Ձև 3-ի),
3) ցուցահանդեսին նախատեսվող մասնակիցների քանակ՝ կազմակերպությունները միասնական ներկայացնող կառույցի դեպքում,
4) ցուցահանդեսի մասնակցությունը հիմնավորող այլ փաստաթղթեր (օրինակ՝ պայմանագիր կամ այլ):

13. Սույն հրամանի Հավելված 1-ի 8-րդ կետի 2-րդ ենթակետում չներառված ցուցահանդեսների մասնակցության հայտերը ստանալուց հետո սույն հրամանով հաստատված Հանձնաժողովն ուսումնասիրում է և տալիս է կամ ցուցահանդեսին մասնակցության հավանություն կամ մերժում՝ համապատասխան հիմնավորմամբ:

14. Հավանության տալու դեպքում Նախարարությունը կազմակերպության հետ կնքում է համապատասխան պայմանագիր:

## IV. Այլ դրույթներ

15. Նախարարությունը ցուցահանդեսների մասնակցության կազմակերպչական աշխատանքների շրջանակներում կարող է ներգրավել նաև այլ կազմակերպություններին:

16. Ցուցահանդեսների մասնակցության աջակցություն ստացած կազմակերպությունները Նախարարություն են ներկայացնում հաշվետվություն՝ պայմանագրով նախատեսված ձևաչափին համապատասխան:

Ձև 1
Կազմակերպվող միջազգային ցուցահանդեսներին
կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի
մասնակցության աջակցության ենթակա
համաֆինանսավորվող ծախսերի տրամադրման կարգի

_____

_____

(կազմակերպության/ների անվանում,

դիմողի անուն, ազգանուն, պաշտոն)

Մասնակցության հայտ

Հարգելի,

Հայտնում ենք, որ 20__ թվականի _____-ի __ _____ (նշել երկիրը և քաղաքը) կայանալու է «_____» ցուցահանդեսը:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում ենք վերոնշյալ ցուցահանդեսին մասնակցության հնարավորությունը դիտարկել կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջազգային ցուցահանդեսներին մասնակցության պետական աջակցության տրամադրման կարգի շրջանակներում:

Կից ներկայացնում ենք հայտ և ծախսերի նախահաշիվ:

Առդիր՝ __ էջ:

Հարգանքով՝

_____

Ձև 2
Կազմակերպվող միջազգային ցուցահանդեսներին
կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի
մասնակցության աջակցության ենթակա
համաֆինանսավորվող ծախսերի տրամադրման կարգի

## ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿ

| | | |
|---|---|---|
| 1. | Կազմակերպության անվանումը | |
| 2. | Գտնվելու վայրը (բնակության վայրը), իրավաբանական հասցե, կոնտակտային տվյալները | |
| 3. | Տեղեկատվություն գործունեության մասին (ուղղվածություն/բնագավառ) | |
| 4. | Ցուցահանդեսի անվանում | |
| 5. | Ցուցահանդեսի անցկացման վայր և ժամկետներ | |
| 6. | Ցուցահանդեսի նկարագրություն (ուղղվածություն/բնագավառ) | |
| 7. | Հիմնավորում մասնակցության կարևորության, ձևաչափի և նախատեսված գործողությունների մասին | |
| 8. | Ցուցահանդեսին ներկայացվող արտադրանքի նկարագրություն | |
| 9. | Նախկինում այդ կամ համանման ցուցահանդեսին մասնակցություն | |
| 10. | Ցուցահանդեսի շրջանակներում ակնկալվող արդյունքները | |
| 11. | Այլ տեղեկատվություն դիմողի ցանկությամբ: | |

_____

(ստորագրությունը, անունը, ազգանունը, պաշտոն)

____ _____20 թ.

Ձև 3
Կազմակերպվող միջազգային ցուցահանդեսներին
կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի
մասնակցության աջակցության ենթակա
համաֆինանսավորվող ծախսերի տրամադրման
և ցուցահանդեսներին դիմելու կարգի

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Ցուցահանդեսի շրջանակներում կանխատեսվող և համաֆինանսավորման ենթակա ծախսային ուղղությունների և դրանց չափի վերաբերյալ

| N | Ծախսային ուղղություն | Գումար | | |
|---|---|---|---|---|
| | | Ընդամենը | Նախարարությունն | Կազմակերպությունն |
| 1. | Մասնակցության վճար | | | |
| 2. | Տաղավարի դիզայն | | | |
| 3. | Վարձակալություն, կառուցապատում | | | |
| 4. | Կահավորում և դրա գործունեության համար անհրաժեշտ ծախսեր* | | | |
| 5. | Ընդամենը | | | |

*ծախսային ուղղությունները պետք է նշվեն մանրամասն ըստ առանձին տողերի

_____

(ստորագրությունը, անունը, ազգանունը, պաշտոն)

____ _____20 թ.

**Հավելված 5**
**Հայաստանի Հանրապետության**
**Էկոնոմիկայի նախարարի**
**2022 թվականի**
**հունվարի 7-ի N 14-Ա հրամանի**

## ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ (ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ, ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ, ՏԱՂԱՎԱՐՆԵՐԻ ԴԻԶԱՅՆ ԵՎ ԱՅԼՆ) ԱՊԱՀՈՎԵԼՈՒ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| | |
|---|---|
| Ն. Տերյան | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ, Հանձնաժողովի նախագահ, |
| Ա. Ասլանյան | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ, Հանձնաժողովի անդամ, |
| Ա. Խոջոյան | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ, Հանձնաժողովի անդամ, |
| Տ. Գաբրիելյան | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ, Հանձնաժողովի անդամ, |
| Ա.Եգանյան | ՀՀ էկոնոմիկայի նախարարության արդյունաբերության զարգացման վարչության պետ, Հանձնաժողովի անդամ, |
| Գ. Աթոյան | ՀՀ էկոնոմիկայի նախարարության ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչության պետ, Հանձնաժողովի անդամ, |
| Գ. Ղազարյան | Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության պարենային անվտանգության և ագրովերամշակման զարգացման վարչության պետ, Հանձնաժողովի անդամ, |
| Կ. Մովսիսյան | ՀՀ էկոնոմիկայի նախարարության իրավաբանական վարչության պետ, Հանձնաժողովի անդամ, |

| | |
|---|---|
| Ա. Պետրոսյան | ՀՀ էկոնոմիկայի նախարարության արդյունաբերության զարգացման վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար: |